



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

82
Կ - 35

1193

1

ՀՈՐԻՆ ՓՈՐՈՒԻԼԸ



ԳՐԵՑ

ՏՕՔԹ. ԶՈՆ Ճ. ՓԷԲԸՆ



Ա. ՊՈԼԻՍ

ՏԱՐԱՎՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՇՈՒԵԱՆ

1902

82
4-35

ՀՈՐԻՆ ՓՈՐՈՒԻԼԸ

Գ Բ 6 8

ՏՕՔԹ. ՃՈՆ Ճ. ՓԷԹԸՆ

մարգ նուարտ ջայլեսի և մտցաւած էդար բիյսի քշտիլե
طبع او لمشدر في ۱۸ مارت سنه ۱۳۱۷

մصارف آمریقان մունիշ շրկու թրֆդն տօվե առերգ طبع او لمشدر

Կ. ՊՈԼԻՍ
ՑՈԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՑԹԵՂՈՍԽԱՆ



2011

ՀՈՐԻՆ ՓՈՐՈՒԻԼԸ

—→————←—

[Տր. Փէթըն, Սկովտացի համբաւաւոր
միսիոնարը, Մեծ Ովկիանոսի նոր Հեղինեա-
նակ կոչուած վայրենի կղզիներուն մէջ քա-
ռասունուիրեք տարի աշխատած է :

Անոր և իր ընկերներուն այս նոր Հեղ-
ինեան կղզիներուն մէջ ձեռնարկած գործը
մեծ յաջողութիւն գտաւ : Յետագայ դէպքը
որ Տր. Փէթընի Անիվա կղզին մէջ բնակած
միջոցին տեղի ունեցած է և զոր ան իր ինք-
նակենսագրութեան մէջ գրած է, Անդիեւ-
րէնէ թարգմանելով կը դնենք հոս :

Պարտիմ հոս ընել պատմութիւնը հորին
փորուելուն որ Անիվայի Հեթանոսութեան մա-
հացու հարուածը տուաւ : Անիվա, բուստի
տափակ կղզի մը, չունի բլուրներ որոնց մի-
ջոցով ամպերը քաշուին, ուստի անձրև քիչ
կու գայ հնա բաղդատմամբ անոր կից լեռնա-
յին կղզիներուն : Եւ մինչեւ անդամ եթէ շատ
յորդ անձրև գայ ալ, ինչպէս յասուկ է
արեւադարձային երկիրներուն, կ'աներեւու-



78325-eech

1475-87 X

2003

թանայ ծակոտիէն ժայռուա հողին մէջ, և
ուղղակի ծոլ կիշնէ: Ուստի Անփլա իր շատ
չոր ըլլալուն համար զրջակայ կղզիներուն շա-
տէն տեղի առողջարար է, թէե հաւանօրէն
այդ նոյն պատճառաւ անոր բնիկները տեսակ
մը ախակի ենթակայ են, որ ծանօթ է «Պար-
պատոյի սրունք», անունով: Անձրեւոտ եղա-
նակը Դեկտեմբերէ մինչև Ապրիլ կը տեսէ, և
յետոյ կը տիրեն ջերմն ու տմնդը որ այդ
կողմերու յատուկ հիւանդութիւն են:

Ժամանակ ժամանակ բնիկները շատ վատա-
ռողջ ջուր կը խմէին, և արդարեւ ամէնէն
ընտիր ջուրը զոր խմելու համար ունէին ուեւ
ժամանակ, կ'ելլէր պատուական քօքօ ընկու-
զէն, բոլոր այս Հարաւային կղզիներուն հա-
մար տեսակ մը Դրախտի խնձորէն: Բնիկները
նաև շատ կը մշակեն շաքարի եղէդ անոր բազ-
մազան տեսակներովը: Եւ անոնք կը ծամէին
զանիկա, մինչ մենք ջուրը կը վագէնիք մեր
ծարաւը յագեցնելու համար, և ուստի շա-
քարի եղէդքը անոնց թէ կերակուր է, թէ
ըմպելի: Սեւամորթը չորս հինգ հատ եղէդ
արար կը տանի իրեն հետ, երբ կ'երթայ
առօրեայ աշխատութեան համար, և ախոր-
ժով կը վայելէ զայն, ժամանակ ժամանակ:
Բաց աստի, ծովը անոնց ընդհանուր լոդա-

րանն ըլլալով, որուն մէջ ձուկերու պէս կը
լողան, և կերակուր եփելու համար ջուրի
պէտք չունենալով, և բնաւ երբեք՝ լաթ լուա-
լու համար, աղբիւրի ջուրի չգոյութիւնը զար-
հուրելի չէր անոնց, ինչպէս պիտի ըլլար
մեղի: Եւ սակայն անոնք աղբիւրին ջուրին
յարդը կը ճանչնան և շատ կը սիրեն զանիկա,
թէպէտ կանաչ քօքոյին ջուրը զովարար է,
և երեւոյթով, համով ու գոյնով լեմննա-
ջուրի կը նմանի, — մէկ ընկոյզէն ելած ջուրը
բաժակ մը կը լեցնէ, — և թէպէտ երբ մայ-
րեր մեռնին, մանկիկները անոր ջուրալ և
կակուղ միջուկովը կը կերակրեն, և մանկիկ-
ները կը զարդանան անով, սակայն բնիկները
իրենք տեղի կ'ախորժին այծու կաթէն և
ջրհորի ջուրէն:

Իմ տունն շատ կը նեղուէր անոյշ ջուրի
չգոյութենէն: Երկու խոշոր տակառներ պատ-
րասաեցի, զանոնք անձրեւի տաեն լեցնելու
համար: Բայց երբ ուղեցինք լեցնել գեղին
մօտ գտնուած փոսէն, բնիկները արգելեւ-
ցին մեղ, վախնալով թէ մեր խոշոր տակառ-
ները բոլոր ջուրը պիտի վերցնէին, և բան
պիտի չմնար իրենց քօքօ ընկուզէ փոքրիկ սա-
փորներով ջուր առնելու համար: Այս հա-
սարակաց ջուրը սուրբ համարուած երկու

մարդոց գետնին վրայ կը դանուէր , որոնք կը պարծէին թէ կարողութիւն ունեին զանիկա պարպելու և լեցնելու երբ որ ողէին : Մնաւ պաշտ ժողովուրդը անոնց ընծաներ կու տային որպէս զի անձրեւը բերէին : Եթէ անձրեւը շուտով դար , ինչ որ նոտիտուէր կ'ընդունէին անոնք , իսկ եթէ ուշանար , աւելի մեծ ընծաներ կը պահանջէին որպէս զի յագեցնէին իրենց ասսաւածները : Մինչև անդամ մեր Անակիթառմյի վարժապետները ըսկն ինձի , երբ առարկեցի թէ իրենք անշուշտ չէին կրնար հաւատալ այսպիսի բաներու ,

“Դժուար է գիտնալ ատիկա , Միսի : Զուրը արագ կ'երթայ ու կու դայ : Եթէ անոնց աղէկ վճարէք , կրնան անձրեւը բերել և մեզի թոյլ տալ որ լեցնենք մեր տակառները :”

Ես ըսի անոնց թէ մենք իրրե Եհովայի ծառաներ , պէտք է անարդենք բոլոր հեթանոսական մնապաշտութիւնները , և օդնութեան համար վստահինք Անոր և Անոր արարչագործութեան օրէնքներուն :

Ուստի որովհետեւ Անիվա անոյշ ջուրի մնայուն միջոց մը չունէր , ոչ աղբիւր , ոչ վստակ և ոչ լիճ , որոշեցի Աստուծոյ օդնութիւնով հոր մը պեղել միսիոնարական շն-

քերուն մօտ , յուսալով թէ ինձմէ անհունաւպէս աւելի իմաստուն Մէկը պիտի առաջնորդէ ինձի օրհնեալ աղբիւրի մը ակը գտնելու : Այսպիսի փորձարկութեան մը գիտական պայշմաններուն բոլորին տղէտ էի , բայց կը հաշուէի թէ հողը և բուստը պեղել պէտք էր երեսուն ոտքէ աւելի , և մեր բոլորակիքը հաշուի առնելով՝ իմ մշտնջենաւոր վախս ոս էր որ մի գուցէ ջուրը , թէպէտ գտնուի ալ , աղի ջուր ըլլայ իմ բոլոր աշխատութենէս ետքը : Եւ սակայն որոշեցի պեղել հորը յոյսով և հաւատագով թէ Աստուծոյ Որդին պիտի փառաւորուի անոր միջոցով : Առաւօտ մը ըսի ցեղագետակն և անոր հետեւորդին , որոնք երկուքն ալ հիմա անկեղծութեամբ հարցուվորձ կ'ընէին Եհովայի և Յիսուսի նկատմամբ , “Ես խորունկ հոր մը պիտի փորեմ գետնին մէջ տեսնենք Աստուած մեզի անոյշ ջուր պիտի զրկէ վարէն :” Անոնք իմ վրաս նայեցան զարմանքով , և ըսին գժութեան մօտ կարեկցական ձայնով մը , “Ո՞հ , Միսի , սպասեցէք մինչև որ անձրեւ դայ , և մենք կարելի եղածին չափ պիտի ամրարենք ձեզի համար :” Պատասխանեցի , “Կարելի է ամէնքս ալ պիտի մեռնինք ջուրին չգոյութեանն համար : Եթէ անոյշ ջուր չդժոնենք , պիտի ստիպուինք բաժ-

նուիլ ձեզմէ : „ Ծերունի ցեղապետը պաղա-
տական ձայնով ըստու , „ Ո՞հ , Միսի , ատոր
համար պէտք չէ որ բաժնուիք : Անձրեւը վե-
րէն միայն կու գայ : Ի՞նչպէս կընուք ակնկա-
լել թէ մեր կղզին անձրեւի հեղեղներ պիտի
զրկէ վարէն : ”

Ըստ անոր , „ Անոյշ ջուրը գետնէն դէպի
վեր կը բղխէ իմ հայրենիքիս մէջ , և կը յու-
սամ թէ հսու ալ պիտի բղիսէ : ”

Ծերունի ցեղապետը աւելի մեղմացուց իր
ձայնը և աղաղակեց , „ Ո՞հ , Միսի , խելքդ-
կը կորանցնես , այո , գուն խելքդ կը կորանցը-
նես , եթէ ոչ այդպէս պիտի չխօսէիր : Թող
մեր ժողովուրդը չէ ըսելդ թէ վար գետ-
նին մէջ պիտի իշնես անձրեւի համար . անոնք
ընտ պիտի չուզեն ըսել քու խօսիդ կամ
հաւատալ : ”

Բայց ես սկսայ իմ արկածալից աշխա-
տովեանս , ընտրելով տեղ մը միսիոնարա-
կան կայանին մօտ և հասարակաց ճամրոն
վրայ , որպէս զի փորելու հորս ամենուն ալ
օգտակար ըլլայ : Սկսայ փորել բահով և
փայտատով և դոյլով առաջին անգամ : Ամե-
րիկեան կացին մը գործածեցի իրուե մուրճ և
ըժակ , և սանդուխ մըն ալ յետոյ երբ պէտք
եղաւ : Բարի ծերուկ ցեղապետը հիմա կ'ը-

մէր իր մարդոց որ հսկեն զիս , որ չըլայ թէ
կեանքու վտանգեմ և կամ ծայրայեղ բան մը
ընեմ : Աապէս կ'ըսէր ,

“ Խեղճ Միսի , ամէնն ալ այդ կերպով է
որ կը հիւանդանան : Մենք հիմա պէտք է որ
հսկենք զանիկա : Անոր աւելի դժուար պիտի
ըլլայ գործել բահով ու փայտատով քան իր
գըլչով , և երբ յոգնի , ձանձրանայ , համո-
զենք զանիկա որ ձգէ այս գործը : ”

Ես աւելի շուտով յոգնեցայ , քան զոր
կը կարծէի Արեւադարձային այն արեւին տակ ,
բայց երբեք չխոստովանեցայ բնիկներուն առ-
ջեւ թէ յոգնեցայ : Տուն գայի և բաճկոնիս
գրպանը լեցուցի Անդղիական խոշոր գեղեցիկ
կարծերով : Աստիք շատ հրապուրիչ են երի-
տասարդներուն համար , երբ կը բազգատեն
իրենցներուն հետ , թէպէտե անոնք վարպե-
տութիւնով շինուած են և իրենց նպաստին
կը յարմարին զարմանալի կերպով : Խոշոր
կարծ մը ձեռքս բռնելով պոռացի , “ Ասկէ
հաս մը պիտի տամ ամէն մէկուն որ այս
փոսէն երեք դոյլ կը լեցնէ և դուրս կը
պարպէ : ”

Մարդիկը խուժեցին և սկսան դործի .
առաջին , երկրորդ եւլու դոյլերը լեցուեցան
և պարպուեցան արագ արագ : Ես դարձ մը

ըմողները մէկ կալմ. կայնեցուցի, մինչև որ
ամէնն ալ կատարեցին իրենց գործը երեք
երեք անդամ, և դոյլ դոյլի ետեւէ լիցուեցաւ
և պարզուեցաւ արագ արագ : Բայց
հօրը շատ կամաց կը խորունկնար, մինչ իմ
կարթերս շատ արագութեամբ կ'աներեւու
թանային : Ես միշտ հոն կը դանուէի, և առ
մէն մէկ բանին ծանր բաժինը վրաս առի,
և ուրախ եղայ իրիկուն մը երբ տեսայ որ
տասներկու ոսքէ առելի խորունկուցած էինք
հօրը : Բայց հետեւեալ առաւօտ տեսանք որ
անոր մէկ կողմը վրած էր, և մեր ամբողջ
գործը աւրուեցաւ :

Մերունի ցեղապետը և իր ընտիր մարտիկը բարդութիւս առին առաջուրնէ առելի եւ^{ու}
անդով : Շատ ծանրութեամբ յանդիմանեց
զիս ցեղապետը : Յիսուներորդ անդամ ըստ
թէ անձրեւը չէր կընար գեանին մէջն գալ
Անիվայի վրայ :

“Հիմա, ” ըստ, “եթէ դուն այդ փոսին
մէջ գանուէիր, պիտի թաղուէիր, և պատ-
գամաւոր մը պիտի գար թորիա թագուհին,
հարցնելու համար թէ ուր է Միսին որ հոս
կը բնակէր : Մենք ալ պիտի լսէինք, ‘Այդ
փոսին մէջ է՝ Պատգամաւորը պիտի հարցնէր,
և Ո՞վ սպաննեց զանիկա և հոն նետեց : ’ Մենք

ալ պիտի լսէինք, ‘Ինք ինկաւ հոն : ’ Պատ-
գամաւորը պիտի պատասխանէր, ‘Պարապ
խօսք, ո՞վ երբեք լսած է թէ սպիտակամորթ
մը գետնին մէջ իջած է ինքվինք թաղելու
համար : Դուք սպաննեցիր զանիկա, դուք նե-
տեցիք զանիկա հոն, մի ծածկէք ձեր գոր-
ծած չարութիւնը սուտերով : ’ Մենք պիտի
չկրնայինք խօսք հասկցնել անոր, անիկա
բնաւ պիտի չհամոզւէր մեր սուտած պա-
տասխաններէն : Միսի, դուն քու գե-
րեզմանդ կը փորես, մերինն ալ կը փորես :
Զդէ ոս յիմարութիւնը, վասն զի անձրեւ պիտի
չդանուի Անիվայի հողին մէջիջներով : Պարձեալ,
քու բոլոր կարթերդ չեն կրնար իմ մարդիկս
հրապարել այդ վնաը մանելու . անոնք չեն
ուզեր քու հետդ թաղուիլ : Հիմա չե՞ս ուզեր
ձգել այդ գործը : ”

Ամէն ինչ որ կրնայի ըսել, ըսի անոր վա-
խերը փարատերւ համար : Բացատրեցի թէ
հօրին փլազուն պատճառը իմ նախազգուշու-
թիւն չընելս էր, և վերջապէս հասկցուցի թէ
իմ Աստուծոյս օդնութիւնովը, մինչև անդամ
առանց ուրիշ օդնութեան, միաքս գրած եմ
շարունակել :

Իմ խեղճ ուզեզս յոդնեցնելով խնդրին
վրայ, եղայ յանպատրաստից ճարտարագէտ

մը : Երկճիւղ երկու ծառ ընարեցի , որոնց
մէջտեղ ծառ մը կրնար դրուիլ խաչաձև դիր-
քով : Զանոնք գետինը տնկեցի հաստատուն
կերպով , միւս ծառը խաչաձև դրի անոնց
վրայ հորին ճիշդ վրան , անոր վրայ հաստա-
տեցի տան մէջ շնուած կոշտ ճախարակ մը ,
չուան մը անյուցի անիւին վրայէն , և իմ
ամէնէն մեծ դոյլս չուանին մէկ ծայրը կա-
պեցի : Այսպէս ընելէ ետքը սկսայ նորէն իջ-
նել հորին մէջ , բայց զգուշանալով որ չըլայ
թէ նորէն փլէի : Եւ տակայն բնիկ մը անդամ
չը ուզեր մտնել հորը , և ես միայնակ կը
կատարէի պեղելու և հողը դուրս պարպելու
աշխատութիւնը , մինչեւ որ բորբովին ուժաս-
պառ եղայ : Բայց վարժապետ մը , որուն վրայ
վստահութիւն ունէի , վերը աշխատեցաւ ինձի
համար , ջանալով վարձել բնիկները անոնց տա-
լով կացիններ , դանակներ , եւլին , որպէս զի
բունեն չուանին ծայրը և քաշեն զայն մինչեւ
որ դոյլս գետանին երեսը ելլէ , և յետոյ ինք
մէկ կողմ կը քաշէր զանիկա , կը պարպէր և
նորէն հորին մէջ կ'իջեցնէր : Երբ դոյլս լեց-
ուէր , ես փոքրիկ զանդակ մը կը զարնէի ,
զոր հետո առած էի , և այդ էր նշանը որով
իմ քաջ օդնականներս կը քաշէին չուանը :
Այսպէս աշխատեցայ օքերով : Սիրտս դրեթէ

կը մաշէր երբեմն քանի կը խորտնկնար հորը ,
մինչեւ որ խորտթիւնը իրը երեսուն ոսքի հա-
սաւ : Եւ « կենդանի ջուր , կենդանի ջուր »
ասացուածը իմ հոգւայս մէջ շարունակ կը
հնչէր իբրև Աստուծմէ եկած երահշտութիւն
մը , մինչ կը փորէի և հողը մէկ կողմ կ'առնէի :
Այս խորութեան մէջ հողը և բուստը
մկան խոնաւութիւն ցուցնել : Հասկցայ թէ
ջուրի կը մօտենայինք : Հոգիս կը հաւատար
թէ Աստուծ մեզի համար աղբիւր մը պիտի
բանար . բայց այս հաւատքին հետ քովէ քով
կար տարօրինակ սոսկում մը թէ մի գուցէ
ջուրը աղի ըլլայ : Այսպէս շփոթ և խառնի-
խուռն են մինչեւ անդամ հոգիին բարձրա-
գոյն փորձառութիւնները . կատարեալ հա-
ւատքի վարդը փուշերով ու տատասկներով կը
շրջապատուի : Իրիկուն մը ըսի ծերունի ցե-
ղապետին ,

« Կարծեմ Եհովա վաղը մեզի ջուր պիտի
տայ այդ փոսէն : »

Ցեղապետն ըստ , « Ոչ , Միսի , դուն եր-
բեք պիտի չտեսնես հողին մէջէն անձրեւին
այս կրղիին վրայ գալլ : Մենք զարմանքով կը
մտածենք թէ ինչ պիտի ըլլայ քու այս յի-
մարական գործիդ վախճանը : Մենք ամէն օր
վախով կը խորհինք թէ եթէ ջուրին հա-

նիս, ծովի պիտի իյնաս, և շանաձուկերը
պիտի ուտեն քեզ: Ասոր վախճանը այդ պի-
տի ըլլայ. մահ քեզի և վտանգ մեղի ամե-
նուս:”

Տակաւին պատասխանեցի, “Եկէք վաղն
առտու: Կը յուսամ և կը հաւատամ թէ
Եհովա Աստուածը մեղի անձրեւի ջուր պիտի
զրկէ գեանին մէջէն:” Այդ վայրկեանին դի-
տէի թէ ինքզինքս վտանգի մէջ կը դնեմ, և
ցաւալի հետեւանքներ կը հրաւիրէի իմ վրաս,
եթէ ջուր չարուէր: Բայց հաւատը ունէի թէ
Ցէրը զիս կ'առաջնորդէր, և դիտէի թէ ես
անոր վառքը կը փնտոէի և ոչ իմ:

Հետեւեալ առաւօտ նորէն գացի արշա-
լյափին և նեղ ծակ մը բացի կեդրոնը իրը եր-
կու ուր խորունկ: Սաստիկ քրտնեցայ ան-
տանելի յուղումէս, և բոլը մարմինովս դո-
գացի երբ ջուրը վեր խուժեց և սկսաւ լեցը-
նել բացուած խոռոշ: Թէպէտ աղմուտ էր,
բայց վախաքով նայեցայ համը, և ուրախու-
թիւնով լեցուեցայ, և գրեթէ ինկայ ծուն-
կերուս վրայ այդ տղմուտ փոսին յատակը
Ցէրը գովելու համար: Զուր էր: Անոյշ ջնոր
էր: Կենդանի ջուր էր Եհովայի հորէն:
Իրաւ, քիչ մը աղի էր, բայց բան մը չէր ա-
տիկա: Եւ անապատին մէջ ոչ մէկ աղբիւր,

որ տենդահար ճանապարհողին պապակած
շրթունքները կը զավայնէ, երբեք աւելի ար-
ժանի կը թուէր Աստուծոյ Զրհորը կոչուելու,
քան այդ ջրհորը թուեցաւ ինծի:

Ցեղապետը և մարդիկը հաւաքռուած էին
մօտիկը: Կը սպասէին սաստիկ հետաքրքրու-
թեամբ: Այս բանը փոքրիկ մէկ կրկնութիւնն
էր իսրայէլացւոց թափառելուն, մինչ Մովկէս
զարկաւ և ջուրը կանչեց: Յետոյ, երբ Տէրոջը
օրհնաբանութիւն մատուցի և իմ յուզումն
մեղմացաւ քիչ մը, տիղմն ալ բաւական տակին
իջաւ, լեցուցի սափոր մը զոր անոնց բոլորին
աշքին առջեւ պարապ իջեցուցած էի իմ հետս,
և հորին բերանը ելլերով կանչեցի զանոնք որ
գան ու տեսնեն անձրեւը զոր Եհովա Աստ-
ուածը սուած էր մեղի հորին միջոցաւ: Զիս
շրջապատեցին անմիջապէս, և անոր վրայ
անկեցին իրենց աշքերը մնապաշտական վա-
խով: Ծերունի ցեղապետը առաւ շարժեց սա-
փորը տեսնելու համար թէ պիտի թափի:,
յետոյ չօշափեց թէ ջուրի կը նմանի: Ի վեր-
ջոյ նայեցաւ համը, և զանիկա վայրկեան մը
ուրախութեամբ բերնին մէջ պաղացնելին եսքը
կլեց և գոչեց, “Անձրեւ, անձրեւ: Այս, անձրեւ:
Բայց ի՞նչպէս ձեռք բերիր:

Նորէն ըսի, “Եհովա իմ Աստուածս տուաւ-

գանիկա իր գետանէն մեր աշխատութիւններուն ու ազօթքներուն պատասխան : Գայցէր դուք ալ նայեցէր անձրեխն բղիսկլ :

Արդ , թէպէտ անոնց ամէն մէկը կրնար ամէնէն բարձր ծառը ելլել սկիւռի մը արագութիւնովն ու աներկիւղութիւնովը , անոնցմէ և ոչ մէկը ունեցաւ քաջութիւն հորին քով երթալու և վար նայելու : Ասիկա հրաշալի էր անոնց : Բայց անոնք բոլորովին անմիտ չէին այս գէպքին հանդէպ : Որոշեցին ամուռ մը բանել իրարու ձեռքերէ և երկար գիծ մը կազմել : Ամէնէն առաջ գտնուող մարդը պիտի նայէր հորին մէջ և յետոյ պիտի անցնէր ամէնէն ետեւը և այսպէս պիտի շարունակէին մինչև որ ամէնքն ալ տեսնէին Եհու վայի անձրեւը որ շատ վարը կը գտնուէր : Իրաւ քիչ մը ծաղրելի տեսարան էր այս , բայց միանդամայն շատ սրտաշարժ էր կայսիլ և դիտել անոնց երեսները , երբ անոնք իրարու ետեւէ կը նայէին այն գաղանիքին վրայ և յետոյ վրա կը նայէին բոլորովին առշած : Երբ ամէնն ալ տեսան զանիկա բուն իրենց աչքերով , զարմացած , ցեղապետը սապէս դոչեց ,

“Միսի , զարմանալի , զարմանալի է ձեր Եհովա Աստուծոյն գործը : Անիվայի աստուածներէն և ոչ մէկը երբեք օգնած է մեզի

այս կերպով՝ Բայց , Միսի , ” շարունակեց , կանդ առնելի ետեւ , որ թուեցաւ թէ լոխն երկպաղութիւն մը ըրաւ այդ միջոցին , “ արդւեզք միշտ այդպէս պիտի անձրեւէ գետնին մէջէն , թէ պիտի դայ և երթայ ամպերէն իշնող անձրեւի նման : ”

Էսի անոնց թէ կը հաւատամ որ անիկա պիտի շարունակէ այդպէս անձրեւել մեզի համար , իբրև Եհովայի բարի մէկ նուէրը :

“ Լաւ , բայց Միսի , ” պատասխանեց ցեղապետը , քիչ մը հետաքրքրութիւն արթըն նալով իր ուղեղին մէջ , “ դուն , կամ քու ընտանիքդ պիտի խմէք զանիկա ամրող , թէ քիչ մըն ալ մենք պիտի խմենք : ”

“ Դուք և բոլոր քու ժողովուրդդ , ” պատասխանեցի , “ և կղզիին բոլոր բնակիչները կրնան գալ և խմել , և տանիլ որչափ որ ուզէք : Կը հաւատամ թէ միշտ առատութեամբ չուր պիտի ունենանք մեզի ամէնուս համար , և որքան շատ գործածենք զայն , այնքան աւելի անոյշ պիտի ըլլայ : Այդ է մեր Եհովային մարդոց նորհած ամէնէն լաւ նուէրներուն յատկութիւնը , և ասոր համար ու ամէն նուէրներուն համար կ'օրհնարաններ անոր անունք : ”

“ Ուրեմն , Միսի , ” ըստ ցեղապետը , “ ասիկա մեր ջուրը պիտի ըլլայ , և մենք ա-



մէնքս ալ կրնանք գործածել իրբե բուն մերը : ”
“Այո, ” պատասխանեցի, “երբ որ ուզէք, և որչափ որ պէտք ունենաք, թէ հոս և թէ ձեր տուներուն մէջ, որչափ հեռու որ կրնաք տանիլ անկէ : ”

Ցեղապետը վրաս նայեցաւ կաթողին, կատարելապէս համոզուած թէ վերջապէս հորը կը պարունակէր գանձ մը, և աղաղակեց, “Միսի, մենք համա ի՞նչ կրնանք ընել քեզի օդնելու համար : ”

Ոհ, մարդկային բնութիւնը ի՞նչպէս միեւնոյն է համայն աշխարհի վրայ : Երբ մէկը կ'աշխատի և կը ճգնի, երբ օգնութիւն պէտք է, զոր շուրջ գտնուող շատեր գիւրաւ կրնան մատակարարել և իրենց աւելի աղէկ պիտի ըլլայ և ոչ գէշ, անոնք կը նային լրութեամբ, կամ կ'օրհնեն զանիկա սամարդի քննադատութիւններով և կամ կը նորմակեն չարականութեամբ Բայց թող քիչ մը անձնական շահ տեսնեն քեզի օգնելուն համար, կամ մինչև անդամ գովեստի գատարկ պղպղակ մը իրենց մատուցած օգնութեանդ համար, տես թէ ի՞նչպէս կը վաղեն օգնել քեզի :

Բայց ես շնորհակալ եղայ ցեղապետին ինձի օգնելուն համար, թէպէտ ցերեկուան ուշ մէկ ժամուն, և լսի,

“Դուք տեսաք որ ատիկա անդամ մը վլաւ արդէն : Եթէ նորէն փչի, պիտի ծածկէ վարէն եկող անձրեւը, զոր մեր Աստուածը տուած է մեզի : Ուրեմն որպէս զի ատիկա պահուի մեզի և մեր զաւակներուն համար ամէն ժամանակ, պէտք է որ վարէն մինչև վերը պատ քաշենք բուստի կաորներով : Ես կը մաքրեմ զանիկա և կը պատրաստեմ բուստէ այս պատին հիմերը : Թող ամէն մարդ և ամէն կին ծովեղեղբէն բերէ, որչափ կրնայ, ամէնէն խոշոր բուստի կաորները : Կ'արժէ այս բոլոր աշխատութիւնը այս կերպով պահպանելու համար մեծ Եհովային պարգեւը : ”

Հաղիւ լմնցուցի խօսքս, և ահա անոնք ծովեղերը վաղեցին ուրախութեան աղաղակներով և երգերով, և տեսայ որ ամէն մէկը բուստի շատ խոշոր կաորներով բեռնաւորուած եկաւ : Բուստերը կը կենային փոթորիկներէ կոտրտուած վիթխարի կոհակներուն միջոցաւ ծովեղերը գլորուած կրաքարի ժայռերու պէս, և անհաւատալի կարծ ժամանակի մէջ անոնցմէ տասնեակներով դիզուեցան հոքին բերանը անոր պատերուն շնութեանը գործածուելու համար : Հիմ մը պատրաստելու ետքը մնառուի պէս բան մը շննեցի, որուն

Վրայ հաստատուն կերպով կապուեցաւ բուստի
ամէն մէկ կառը և ճախարակով ինծի իջուց-
ուեցաւ հորին մէջ։ Եւ բնիկ վարժապետ մը,
հաւասարիմ մէկը, զգուշութեամբ կը հոկեր
գործին վրայ։ Ամէն մէկ քար ընդունեցի և
վետեղեցի ուր որ պէտք էր, ամէն ջանք ընե-
լով լաւ շարել զանոնք իրարու քով շուրջա-
նակի և զանոնք կարելով Ամերիկեան տա-
պարովս ինչ ձեւ որ պէտք ըլլար։ Պատը երեք
տաքի չափ թանձր է, և կրնայ երաշխաւոր-
ուիլ թէ անոր հիւսուածքը պիտի մնայ մինչև
նոյն խակ բուստին փափիլ։ Անդոււլ անդադար
գործեցի, վախնալով որ մի գուցէ նորէն փլին
հորը, մինչև որ պատը երր քսան ոտք բարձ-
րացաւ, և այլեւս ապահով զգալով, որով-
հետեւ ձեռքերս գէշ կերպով կարառուած էին,
ըսի թէ պէտք է որ մէկ կամ երկու շարաթ
հանդիսաւ ընեմ, և այնուհետեւ ընցնեմ
գործը։

Բայց ցեղապեաը յառաջ եկաւ ինծի և
ըստ,

“Միաի, գործին սկսած ատենդ զօրաւոր
երր, բայց հիմա ոյժդ դացած է։ Հիմա
հանդէ՛ հս մեր քով, և միայն ցուցուր թէ
ուր գրուելու է ամէն մէկ կառը։ Մենք զա-
նոնք պիտի դնենք հոն, մենք քեզի պէս պիտի

շինենք պատին մնացած մասը հաստատուն
կերպով։ Եւ մէկս պիտի չքնանանք մինչեւ որ
ըննայ գործը։

Անոնք իրենց բարոր յօժալութեամբ և
սրտով գործել սկսան։ ոմանք կը կրէին,
ոմանք կը կտրէին և կը շարէին կը զետեղէին
կտորները, մինչեւ որ պատը բարձրացաւ իրը
մողական արհեստով, և վիթխարի ժայռերու
կարգով մը անոր գագամթը շրջապատուեցաւ
և հորին բերանը ձեւացաւ։ Կիներ, տղաք և
ամէնքը կ'ուղէին բաժին մը ունենալ զանիկա
շնելու մէջ, և մինչեւ այսօր անիկա որմնա-
գրութեան արհեստին հաստատուն մէկ պատն
է, բոլըրակին խորութիւնը ըլլալով երեսունը-
չորս ոտք, լայնութիւնը ուժ ոտք վերի գլուխը
և վեց ոտք վարը։ Ես ամէնէն վերը փայտով
յատակեցի, և հոն հաստատուցի անուորդը և
գոյլը, և հորը կը կենայ իրրե մին ամենամեծ
նիւթական օրհնութիւններէն զօր Տէրը տուած-
է Անիվայի։ Անիկա կ'ելլէ ու կ'իջնէ մակրն-
թացութեան և տեղապտութեան ժամանակ,
թէպէտ ծովէն մէկ երրորդ մղն հեռի է։ Եւ
երր զանիկա գործածելէ ետքը մեր բերանն
առինք Տէյուքնէ նատուն բերած զուտ անոյշ
ջուրը, մեր հորին ջուրին բաղդատմամբ այնքան
անձաշակ թուեցաւ անիկա, որ մինչեւ որ թէյիս

շաքարին մէջ քիչ մը աղ չերի , չկրցի խմել։
Բոլոր այցելուները այդ հորը տեսնելու կը
տարուին , իրեւ Անփայի հրաշալիքներէն մին ,
և եկեղեցւոյն օգնական երեցներէն մէկը վեր-
շերս ըստ ինծի ,

“Եթէ այդ ջուրը չկենար , անցեալ եր-
կու տարիներու երաշտութեան միջոցին ա-
մէնքս ալ կը մեռնէինք ։”

Շատ զարմանալի է որ թէպէտե բնիկները
անկէ ի վեր փորձած են վեց եօմը հոր փո-
րել յարմար տեղեր զանազան գեղերու մօ-
տերը , անոնք կամ բուտի ժայռի հանդի-
պեցան , զոր չէին կրնար ծակել , կամ միայն
այնալիսի ջուր գտան որ աղի էր ։ Եւ կ'ըսէին
իրենց մէջ ,

“Միսին ոչ միայն բահ և բրիչ գործա-
ծեց , հապա աղօթեց ու աղաղակեց իր Առ-
տուծոյն ։ Մէնք սորվեցանք փորել լայց ոչ
աղօթել , և ասոր համար Եհովա մեզի անձրէ
շտար գետնին տակէն ։”

Հորը հիմա լմնցած էր ։ Անոր բոլորակը
եղող գետինը ցանկուլ շրջապատուեցաւ ։ Եւ
ծերունի ցեղապետն ըստ ,

“Միսի , հիմա որ այս ջուրը ամէնուս հա-
մար է , պէտք է որ հոգ տանինք զանիկա
մաքուր պահելու ։”

Ես շատ գոհ էի որ ամէնն ալ պիտի գոր-
ծածէին զանիկա ։ Եթէ միայն մենք ջուր քա-
շէինք անկէ , անոնք շատ դիւրաւ կրնային
թունաւորել զայն , ինչպէս կը թունաւորեն
ձուկի լճակները որոնք կը գտնուին ծովեղերքի
ժայռերուն մէջի քարայրներուն մէջ , իրենց
թունաւոր բայսերով և մեղ ամէնքս սպաննել ։
Բայց հիմա վախ չկար քանի որ իրենք ալ
պիտի գործածէին զանիկա ամէն օր ։ Ցեղա-
պետը շարունակեց ,

“Միսի , կարծեմ ես կրնամ օգնել քեզի
յառաջիկայ կիրակի ։ Կ'ուզե՞ս որ քարով մը
խօսիմ հորին վրայ ։”

“Այս , ” պատասխանեցի անմիջապէս ,
“Եթէ ջանաս բերել բոլոր ժողովուրդը քեզի
ունկնդրելու համար ։”

“Միսի , ես պիտի ջանամ , ” ըստ եռանդով ։
Լուրը կայծակի պէս տարածուեցաւ թէ
ցեղապետ նամափի միախոնար պիտի ըլլայ
վաղը աղօթքի համար , և ժողովուրդը մեծ
հետաքրքրութեամբ կը հարցնէին իրարու թէ
ան ինչ պիտի ըսէր ։”

Կիրակին եկաւ ։ Անփա ժողովուեցաւ մեծ
բազմութեամբ ։ Նամափի երեւցաւ շապիկ և
կարճ շրջազգ եստ հագած ։ Այնպէս յուզուած
էր և իր կացինն այնպէս փայլեցուցած էր որ

իբր թէ մահու և կենաց գործ մը ունէր իր առջև : Ես կարճ սկզբնաւորութիւն մը ըրի պաշտօնին և յետոյ հրաւիրեցի նամաքին : Խկայն ուրի ելաւ , աչքերը տարօրինակ կերպով բոցավառ , և ձեռքերն ու ուրիշը դուզալով իր յուզման պատճառաւ : Խոսեցաւ հետեւեալ իմաստով , ճօճելով իր կացինը իբր թէ փայլ մը տալու համար իր պերճախոսական շարժումներուն ,

“Ով նամաքի բարեկամները , Անիվացի մարդիկ , կիներ և տղաք , մտիկ ըրէք իմ խօսքերս : Միսին հոս գալէն ի վեր խօսեցաւ շատ մը տարօրինակ բաներ զորոնք չենք կրնար հասկնալ , ամէնն ալ շատ զարմանալի բաներ , և մենք անոնցմէ շատերուն համար կ'ըսէինք թէ սուտ ըլլալու են : Մենք կ'ըսէինք թէ սպիտակամորթները կընան հաւատալ այս պիտի ամհեթեթ բաներու , բայց սեւամորթները աւելի աղէկ գիտեն , ուստի չեն հաւատար : Բայց անոր բոլոր զարմանալի պատճութիւններուն մէջ , ամէնէն տարօրինակը թուեցաւ մեղի գետինը փորել և անձրեւ ունենալ : Այս ատեն ըստիք իրարու , ‘Մարդը խելքը փախուցեր է : ’ Բայց Միսի աղօթեց շարունակ և փորեց անընդհատ , և կ'ըսէր մեղի թէ Եհովա Աստուածը լսեց ու տեսաւ , և թէ

իր Աստուածը անձրեւ պիտի տայ իրեն : Խելագարեցան անիկա : Միթէ անձրեւը չստացան գետնին խորոթենէն : Մենք ծաղրեցինք զանիկա , բայց և այնպէս ջուրը հոն էր : Մենք ծիծաղրեցանք Միսիին միւս ըրած բաներուն վրայ , վասն զի զանոնք չենք կրնար տեսնել : Բայց այս օրէն կը հաւատամ ես թէ ամէն ինչ որ կ'ըսէ անիկա իր Եհովա Աստուծոյն վրայ , ճշմարիտ է : Օր մը մեր աչքերը պիտի տեսնեն թէ ճշմարիտ է : Վասն զի այսօր տեսանք անձրեւին գետնին մէջն գալը : ”

Այսուհետեւ բարձրացնելով մէյ մը մէկ ուրիշ մէյ մը միւսը , այնպէս որ գետնին վրայի կոտրած բուսաը ետեւը կը թռչէր , ինչպէս պատերազմական ձի մը սրբակներովը գետինը կը փորէ , գոչեց մեծ պերճախօսութեամբ ,

“Ով իմ ժողովուրդս , Անիվայի բնակիչներ , աշխարհը տակնուվրայ եղաւ Եհովայի խօսքին այս երկիրը գալէն ի վեր : Ո՞վ երրեք կ'ակնկալէր տեսնել անձրեւին գալը գետնին մէջն գէպ ի վեր : Անիկա միշտ ամպերէն կու գայ : Զարմանալի է այս Եհովա Աստուծոյն գործը : Անիվայի ոչ մէկ Աստուածը երրեք աղօթքի պատասխանած է ինչպէս պատասխանեց Միսիին Աստուածը : Ով նամաքի բարեկամները չեն կարող

զմեզ բոնադատել հաւասարու թէ անձրե կրնայ տրուիլ երկրի խորութիւններէն , եթէ տեսած չըլլայինք զանիկա մեր աչքերով , եթէ չօշափէինք և համը չառնէինք ինչպէս կ'ընենք հոս : Հիմա , Եհովա Աստուծոյն օդնութեամբ , Միսի այդ անձանօթ անձրեւը երեւան բերաւ , զոր առաջ լած կամ տեսած չէինք , և „ (ձեռքը կուրծքին զարնելով աղաղակեց)

„ Հոս բան մը իմ սրտիս մէջ կ'ըսէ թէ Եհովա Աստուծը կայ , Անտեսանելի էամը , որուն վրայով երբեք լած չէինք , ոչ ալ տեսած էինք զանիկա մինչև որ Միսին զանիկա մեզի ճանչցուց : Բուսաը մէկ կողմ առնուածէ , գետինը մաքրուած է , և ահա ջուրը կը բարձրանայ : Թէպէտ անտեսանելի մինչեայօր , բայց հոն եր , թէպէտ մեր աչքերը չէին կրնար տեսնել : Այսպէս ես , ձեր ցեղապետը , հիմա հաստատապէս կը հաւատամ թէ երբ մեռնիմ , երբ բուստի կտորները և փոշիի գէզերը մէկ կողմ երթան , որոնք հիմա կը կուրցնեն իմ ծերացած աչքերս , այն տեսն պիտի տեսնեմ Անտեսանելի Եհովա Աստուծը իմ հողիովս , ինչպէս Միսին կ'ըսէ ինձի , ոչ նուազ անտարակուսելի կերպով քան զոր տեսայ անձրեւին վեր ելլելը վարի գետնէն : Այս օրուընէ , ով իմ ժողովուրդս ,

ես պէտք է որ պաշտեմ այն Աստուծը որ բացած է մեզի այդ հորը և որ կը լցնէ մեզ վարէն եկող անձրեւով : Անիվայի աստուծները չեն կրնար լաել , չեն կրնար օդնել Միսիին Աստուծոյն նման : Այսուհետեւ ես Եհովա Աստուծոյն հետեւող մըն եմ : Ամէն ով որ ինձի պէս կը խորհի թող երթայ հիմա և առնէ Անիվայի կուռքերը , այն աստուծները որոնցմէ մեր հայրերը կը վախնային , և նետէ Միսիին ոտքը : Այրենք , վառենք և չնչենք փայտէ ու քարէ այս բաները , և թող Միսին սորվեցնէ մեզի թէ ինչպէս պէտք է ծառայել այն Աստուծոյն որ կրնայ լոել , Եհովային՝ որ տուաւ մեզի հորը և որ պիտի տայ մեզի ամէն ուրիշ օրհնութիւն , վասն զի Անիկա զրկեց իր Որդին Յիսուսը որպէս զի մեզի համար մեռնի և մեզ երկինք տանի : Այս է զօր Միսիին ամէն օր կը խօսի Անիվա գալէն ի վեր : Մենք խնդացինք անոր վրայ , բայց հիմա կը հաւատանք անոր : Եհովա Աստուծը անձրեւ զրկեց մեզի գետնէն : Ինչո՞ւ չզրկէ նաև իր Որդին երկինքէն : Նամարի Եհովայի համար կը կանգնի :

Այս ուզերձը , և հորին պեղումը , ինչպէս արդէն ըսի , Հեթանոսութեան մահացու հարուածը տուաւ Անիվայի մէջ : Նոյն խոկ այդօր իրիկուան գէմ ծերունի ցեղապետը և

անոր ժողովուրդէն ոչ սակաւ հոգիներ բերին
իրենց կուռքերը և զանոնք նետեցին իմ ուրս
մեր տան դրան քով։ Ո՞հ, այն հետեւեալ
շաբաթներուն սասափիկ գրգռութիւնը։ Խումբ
խումբի ետեւէ հոն եկան իրենց փայտէ ու քարէ
աստուածներով բեռնաւորուած, և զանոնք
դէղ դէղ ըրին, ոմանց արցունքներուն և հետ
կեկանքներուն և ուրիներուն աղաղակներուն
միջոցին, որոնց մէջ կը լսուէր՝ շատ անդամ
կրկնուած բառը, «Եհովա, Եհովա։», ինչ որ
կրնար վառուիլ, բացերուն կը յանձնէինք, խոկ
միւսները տասներկու տասնըհինգ ոտք խոր
փոսերու մէջ կը թաղէինք, և քանի մը ուրիշ
ներ, որոնք միւսներէն աւելի հաւանական էր
թէ պիտի սնուցանէին կամ արթնցնէին սնաւ
պաշտութիւն, հեռուն ծովուն խորութեան
մէջ թաղեցինք։ Հեթանոս աչք մը թող նոր
ընայի երբեք անոնց վրայ։

Էսել չենք ուղեր թէ ամէն պարագանեւ
րու մէջ անոնց շարժառիթները բարձր կամ
լուսաւորեալ էին։ Պակաս չեղան այնպիսիներ
որոնք կ'ուղէին որ այս նոր շարժումին համար
վճարուէր իրենց, և շատ խոժուեցան երբ
զայցանք «զնել», իրենց աստուածները։ Երբ
լսուեցաւ իրենց թէ Եհովա չհաճիր մինչեւ որ
մերժէին զանոնք իրենց աղատ կամքով,

և կոլանցնէին առանց վճարուելու կամ վար-
ձատրուելու, ոմանկը զանոնք նորէն տուն տա-
րին և ժամանակ մը պահեցին, և ուրիշներ
նետեցին զանոնք արհամարհանքով։ Ժողովներ
եղան, բանախօսութիւններ արտասանուեցան,
վասն զի այս նոր Հեպրիտեանցիները պեր-
ճախօս և հմայիչ ատենարաններ են և իրենց
ոճը պանչելի վառվուն է։ Շատ խօպեր,
խօսակցութիւններ յաջորդեցին ատենախօ-
սութեանը, և կուռքերուն ջնջումը շուառվ
յառաջ կ'երթար։ Յետոյ երկու «սուրբ մար-
դիկ» և քանի մը ուրիշ ընտրեալ անձինք
սահմանուեցան իրբեւ քննիչ մասնախումբ,
հետազոտելու և երեւան հանելու համար զանոնք
որ կ'ըսէին թէ մերժած են բոլոր կուռքերը,
բայց քանի մը կուռքեր կը ծածկէին և գաղտ
կը պահէին, և քաջալիքելու համար տատա-
նողները ողավէս զի լման որոշման մը գային
Եհովան ընտրելու մասին։ Այս սասափիկ յուղ-
ման օրերուն մէջ մենք հանդարս կեցանք և
տեսանք Ցէրոջը փրկութիւնը։

Այսուհետեւ անոնք մեղ կը շրջապատէին
մեր ամէն մէկ ժողովին ատենը։ Փափաքով
կ'ունկնդրէին Յիսուսի կեանքին և մահուան
պատմութեանը։ Անոնք կամովին ընտրեցին
իրենց համար այս կամ այն տեսակ համա-

գերձը : Եւ ամէն կարեոր բան լիովին և հաւասարմաբար մեզի կը յայտնէին խորհուրդ և տեղեկութիւն ընդունելու համար : Քրիստոնէական սովորութիւններուն առաջին բաներէն մին զրդ դիւրաւ և գրեթէ միաբան ընդունեցին, էր Աստուծոյ օրհնութիւնը հայցել ամէն ճաշի վրայ, և օրհնաբանել մեծ Եհովան իրենց համապատօրեայ հացին համար : Ով որ այսպէս չէր ըներ, Հեթանոս կը նկատուէր : (Սրդեզք քանի աղքատահորն հեթանոսներ կան :) Յաջորդ քայլը, և այդ այնախի կերպով մը որ իբր թէ ընդհանուր հաւանութեամբ եղաւ, և որ ուրախափ էր և նոյնքան ալ զարմանալի, էր տեսակ մը ընտանեկան պաշտամոնք ամէն առաւօտ և երեկոյ : Անտարակիոյ աղօթքները յաճախ շատ տարօրինակ և անհեթեթ բաներ կ'ըլլային, և հեթանոսութեան մնացորդ շատ մը մնաբաշտութիւններով խառն, բայց էին աղօթքներ մեծ Եհովայի, Գթառատ Հօրը, Անտեսանելի էակին, և ոչ եւս քարէ աստուածներուն :

Ի հարկէ ասոնք մեր իբրեւ քրիստոնեայ անոնց մէջ վարած կեանքին աչքի զարնող հանգամանքներն էին, այսինքն՝ առաւօտ և երեկոյ ընտանեկան աղօթք, և կերակուրի տաեն գոհութիւն, և ուստի, յոյժ բնակա-

նապէս, անոնց բնազգօրէն որդեգրելը և ընդօրինակելը այս բաները իբրեւ առաջին արտաքին նշաններ քրիստոնէական վարժութեան ։ Ամէն տուն ուր չկար առ Աստուած աղօթք ընտանիքին մէջ, Հեթանոս կը ճանչցուէր ։ Այս էր նոր կրօնքին ուղղակի և գործնական ապացոյցը, և այս ապացոյցը այնպիսի բան մըն էր որուն նկատմամբ սխալ չէր կը նար կենալ երկու կողմէն ալ :

Երրորդ ակնյայանի հանգամանք մը որոշակի կը տեսնուէր անմիջապէս, այն է՝ Տէրունական Օրուան պահպանութեան նկատմամբ տեսնուած փոփոխութիւնը : Գեղ գեղի ետեւէ այս բանին մէջ ալ հետեւեցաւ Միսիոնարական Տան օրինակին : Բոլոր սովորական զրագումները դադարեցան : Կիրակի օրը Եհովայի Օր անունով կոչուեցաւ : Շաբաթ օրը կոչուեցաւ «Եփելու օր»՝ ակնարկուելով յաւելուածական պատրաստութիւնները հանգստեան և երկրպագութեան օրուան համար : Անոնք կը հաւատային թէ Եհովայի կամքն էր շարթուն առաջին օրը սուրբ պահել : Հակառակ Հեթանոսութեան որոշ նշան կը համարուէր :

Նոր ընկերական կարգի առաջին նշանակերը սկսան երեւան գալ և աչքը զուարթայնել : Ամբողջ բնակիչները, դեռահասակ

և ծեր, հիմա դպրոց կ'երթային, երբեմն
երեք սերունդ իրենց գասագիրք կ'ունենային
միեւնոյն Այրքենարաննը։ Հիմա կը զազուէին
գողոթիւնները, կրիւները, ոճիրները, եւն.
ոչ թէ գաւազանի հարուածներով, այլ՝ տու-
գանքով կամ խարազանով, ինչդէս այս մա-
սին համաձայնութիւն գոյացաւ ցեղագետնե-
րուն և անոնց ժողովուրդներուն մէջտեղ։
Ամէն բան արագ արագ “նոր” եղաւ Յիսուսի
խմօրին ազդեցութեան ներքեւ։ Աշխատափ-
րութիւնը աւելցաւ։ Հիւզերն ու անկաստան-
ները ապահովուեցան։ Առաջ ամէն մարդ-
ճամբորդութեան ատեն իր հետ կը կրէր բո-
լոր իր թանկագին բաները, հիմա ապահո-
վութեամբ կը թողովէին անոնք տան մէջ։

Մինչեւ անգամ հաւու ձագեր կամ խո-
զու ձագեր տոսլրակներու մէջ գնելով իրենց
հետ կը պարտցնէին ժողովուրդը Հեթանոսու-
թեան օրերու մէջ։ Ուստի եկեղեցին մէջ
երբեմն կը լսէինք հաւու ձագերու ճռուողիւնը
և խոճքորակներու (խոզու ձագ) խանչիւնը և
շան լակուններու հաշիւնը, որոնք զուարճակի
կերպով կը պատասխանէին իրարու մինչ մենք
կ'երգէինք, կամ կ'աղօթէինք և կամ Աւե-
տարանը կը քարոզէինք։ Ուրախ ըլլալով բնիկ-
ները հնո՞ւ աեսնելնուս համար, մինչեւ իսկ

իրենց վերաբերեալ բաներով, զգուշութեամբ
կը զաղէինք մենք մեղ գժգոհութիւն յայտ-
նել։ Բայց երբեմն պաշտամունքին թելլ
փախցնելու վտանգը տեղի կ'ունենար, մա-
նաւանդ երբ խոճքորակի մը տէրը կը մաքա-
ռէր անոր հետ զանիկա լուեցնելու, այն պղոփիկ
անզգամը ամէն բան կը խանդարէր իր եր-
կարատեւ և կատաղի ճիշերով։

Բնիկները իրաց այս վիճակը վրդովիչ նկա-
տելով իրենց և բոլոր իրենց շուրջ գտնուող-
ներուն, ընդհանուր ժողով մը հրավիրեցին,
և միաձայն գատուպարտեցին ապօրինաւոր
ընթացքները, միաբանութեամբ ծանր տու-
գանքներ և սաստիկ պատիմներ տնօրինեցին
ամէն տեսակ գողովութեան։ Այսու ամենայնիւ
ցեղագետները ասիկա երկարատեւ գժուար
գործ գտան, բայց հաստատ կեցան իրենց
նպաստակին վրայ Աւետարանին ներշնչութեան
ներքեւ և յաղթեցին բոլոր գժուարութիւն-
ներուն։ Մինչեւ անգամ այն փորձանկներն ու
գժուարութիւնները որոնց կը հանդիպէին,
Աստուծոյ մնօրինութեամբ օգնեցին անոնց,
որպէս զի բուն իրենց անձնական փորձառու-
թեան լցուով յօրինեն իրենց մէջ տիրող ոճիր-
ները զապելու յարմար ընկերային օրէնքները,
և քաջալերելու այն առաքինութիւնները որոնց

մշակուելուն մասնաւոր պէտք կար : Հեթանոսական պաշտամունքը հետզհետէ մարեցաւ, և թէպէտ ոչ մէկը կը բռնադատուէր եկեղեցի գալ, Անիվայի ամէն մէկ բնակիչ, առանց բացառութեան, եղաւ ուխտեալ երկրպագու Եհովա Աստուծոյ : Նորէն, “Ով Գալիլիացի, յաղթեցի՞ր :

Այն ժամանակէն հետէ յաճախ կը մտածեմ այն ծերունի մարդակեր ցեղապետին վրայ, որ ինք իր ժողովրդով մէկտեղ հորին փորուելէն և անտեսանելի ջուրին երեւան գալէն տրամարանելով եղրակացուց և հաւատաց գոյութեան և զօրութեան այն մեծ, աներեւոյթ Աստուծոյն, աղօմքի միակ Լսովն և պատասխանողին :

“Ենորհակալ Եմ քեզմէ, ով Հայր՝ Տէրերկնի և երկրի, որ աս բաները ծածուկ պահեցիր իմաստուններէն ու գիտուններէն, ու տղոց յայտնեցիր : Այո, ով Հայր, ինչու որ քու առջիդ ասանկ հաճելի եղաւ : . . . Եկէք ինձի, բոլոր յոդնած ու բեռնաւորուածներ, և ես ձեզ պիտի հանդչեցընեմ : Իմ լուծս ձեր վրայ առէք, և ինձմէ սորվեցէք՝ որ հեզ եմ ու սրաով խոնարհ, և ձեր անձերուն հանդստութիւն պիտի գտնէք . ինչու որ իմ լուծս քաղցրէ և իմ բեռս թեթե .” (Մատ. ԺԱ. 25-30) *



2019

سک



معارف نظارت جیله سی و مطبوعات اداره بہیه سی رخصتبه
طبع اول منتشر ف ۱۸ مارت سنہ ۱۳۱۷